

ինչ որ քան տարի առաջ ուրիշ սերունդ մը պատգամած է ու մասամբ կիրարկած:

Հայ ցեղը՝ իր դարերու կեամբին մէջ ու դէպի ապագան իր վազքովը. հայ խառնածքը՝ դէպի գաղափարականութիւն հակած ու խուզարկու. հոգեկան ու իմացական հորիզոններու. հայկական դիւցազնամարդոք՝ ժամանակի մէջն, յանուն ազատազրութեան եւ հայրենիքի ինքնուրոյնուրեան:

Ցեղապաշտութիւն, բայց առանց այլամերժութեան. ենոու. մեղ ազգայնամոլութենէն, այլանդակ ու ջլատիչ. բաց՝ համամարդկային շարժումներու առջեւ, ընդունակ՝ ընդգրկելու մարդկային հոգին, խառնելու ընդհանուր մտածումներու ալիքին, պահելով միշտ իր ինքնուրոյնուրեան:

Հարկ է որ հայ արևստագէտը, - գիրինը, գոյնինը կամ ճայնինը - իր ցեղային երակին հասնելու ատեն, բաւական հզօր ըլլայ մարդուն հասնելու համար. եւ հայը տալով մարդը կարենայ տալ, ընդհանուր ստեղծագործութեանց կարգին տեղ ունենալու եւ ազգային հորիզոններին կարենալ հասնելու համար մարդկայնութեան սահմաններուն:

Այս ամենը՝ բայց՝ միշտ տեսնեած ու տրած արւեստի մը մէջն, - ոն, լեզու եւ իրականացման եղանակ - առանց որում զորկ են միայնու արժեքի մտաւոր ու զգացական բայր կառուցումները. անկերպարան նիւթ՝ որ ցումները. անկերպարան նիւթ՝ որ նարտապետին կը սպասէ դղեակի վենարտապետին կը սպասէ դղեակի վենարտապետին առ արածւելու. կամ կամ ու զան՝ որ արածանագործի մուրմին կը կարօտին, յը-

դացւած, բռնւած երազ մը յաւերժացւելու համար:

Ունինք տարրերը, - ոգի, պերն լեզու, հարուստ պատմութիւն ու փարքարամ դարաշշան: Պիտի ունենա՞նք կամքն ու հաւատոքը՝ որ տանին մեզ այս ուղիով: Բայց նախ՝ պիտի ունենա՞նք այն դէմքերը, որոնք ուխտածներու պէս, մեր նորագոյն պատմութեան հերոսներուն պէս, կրկէս իշնեն, նոր հերկեր բանան, պայցքար ու կիրք ստեղծեն, ուրանան, գուրգուրան, խուզարկեն ու կերտեն եւ մօտենան հայուն դարադըրոշմ նակատագրին ու բռնեն անոր լուսնին խորհուրդը:

Այդ ուխտածները միայն կրնան իրագործե՞լ, - ինչպէս մեր ամենան ֆէտայիները, ինչպէս մեր հին ու առավելատիպ կրօնաւորները ըրած են իրենց կալւածին մէջ, - մեր ցեղաշոնչ երազը, գրականութեան կալւածին մերս, անկրնչելի ժանդակներու վերածելով հայուն փշրւած, բայց միշտ անկառուրակ ոգին, հայուն մշտափափոխ բայց մշտանյն կուրիւմը:

Մինչեւ չծնի այս բոք հաւատոքը, այս խորունկ մոլեռանդութիւնը գրականութեան հանդիպ հայ գրողներուն մէջ, կարելի չէ ունէ յոյս ունենալ ո՞ւնէ մեծաշուրջ ստեղծագործութեան մասին:

Գալիք տարին՝ այս մոլեռանդ ու փոքրաշոնչ ջնկատին տարին բռզ ըլլայ, տարին՝ գրական դիւցազնական սերմանութիւն:

Ինչո՞ւ հաւատք չունենալ սակայն, յեղափոխութեան ու յեղափոխականներու գործին՝ արևստի ու գրականութեան սարալանցերուն վրա:

Գահիրէ. Գ. Մեհմանական

### Օ՞Վ. և «ԽԾՐԱԴԻՄԱՅ»-ի ՀԵՂԻՆԱԿԻ

«Վէմ»-ի Բ. ք. ի մեր յօդածում պատասխանելով այն հարցին, ք. ո՞վ է սարապաղետին կը սպասէ դղեակի վենարտապետին այս հասել է մեզ, երեք ձեռնութեան» կատա-

կերգութեան հեղինակը, ասել էիմ. . . . «Խտրադիմայ»ն այն ձեռնով, ինչպէս որ նա հասել է մեզ, երեք ձեռնու

կամ երեք խմբագրութեամբ է ամցել – յօրինել է Մատաղ Բանաստեղծը՝ ուղղումներ ու սրբագրութիւններ է արել Օհանասպիփուեան միաբանութիւնը (ընկերութիւնը) եւ վերջապէս հիմնական բարեփոխութիւնների է ենթարկել ու հրատարակութեամ տւել դպիք\*» «Մարտիրոս Մկրտչեամբ»: Բայս ենթիմակի անձնաւորութիւնը մնում էր անյայտ, որովհետեւ ոչ զրածքում, ոչ էլ նրան կցւած ընդարձակ բացասարութեան մէջ («Հասարակախօսութիւն») յիշւած չէ նրա խսկական անունը:

Ի հարկէ, Մատաղ Բանաստեղծը եւ վերջին խմբագիր Մարտ Մկրտչեամբ կարող են երկու բռնորովին տարրեր անձնաւորութիւններ եղած լինել – ինչպէս որ ենթարկել էիմ մեր վերոյիշեալ յօդածում: Սակայն մեր ձեռք բերած նոր տեղեկութիւնները բռյլ են տալիս նաև ենթադրելու, որ նրանք քերեւս մէկ եւ միևնույն անձնաւորութիւնն են:

Այդ դէպքում այդ մէկ անձնաւորութիւնը ինքը դպիք Մ. Մկրտչեանն է, որ հանդէս է եկել երկու տարրեր դէմտով եւ երկու տարրեր անուններով՝ Մատաղ Բանաստեղծ եւ Մ. Մկրտչեան:

Ուզում ենք ասել, որ Մատաղ Բանաստեղծ կոչւածն էլ նոյն ինքն Մ. Մըկրտչեամբ կարող է լինել, որը գանազն նկատումներով սկզբում յարմար է համարել իր անձը բագցնել «Մատաղ Բանաստեղծ» վարագոյրի ներքյո:

Նկատումներից առաջինը համեստութիւնը կարող էր լինել: Երիտասարդ մարդ – դպիք Մարտիրոսը «Խորադիմայ»-ի տպագրութեան տարին (1821 թ.) բռնորովին երիտասարդ էր – հանդէս

գալով մէկ շատ պատասխանառու գրքածով, քնական է որ, համեստութիւնից դրդած, չկամենար իր անունը դըրոշմել նրա նակատին:

Միւս պատճառը վախը կարող էր լինել: Թէպէտ դեռ երիտասարդ, բայց արդէն բաւական մեծ անուն ու հեղինակութիւն ունէր նա, որպէս զիտական: Դրա հետ միասին՝ երէ իր «Շոնմարան» քերքը տակաւին չէր սկսել, բայց արդէն պատրաստութիւններ էր տեսնում հրատարակութեան ձեռնարկելու: Ճետեւաբար, այս նոր երկով նա կարող էր իր փայլուն անունը փոանցի տակ դնել: Երէ այդ երկը անյաջող գուրս գար – ապա կարող էր իր հեղինակութիւնը կրցնել: Եւ ուրեմն այդ փարձութիւնից գերծ մնալու լաւագոյն միջոցն էր՝ կեղծ անունով հրապարակ գալ, որպէսզի զրածքը տապալելու դէպքում իր անունը անվար մնար:

Բայց կար մէկ աւելի կարեւոր համգամանել եւս: Այդ այն է, որ «Խորադիմայ»-ն բռնորովին նորութիւն էր իր միջավայրում, մանաւանդ նիւրն ու սիպերն էլ առնեած տեղական կեանից ու բացասականորէն ներկայացւած: Ուրեմն, որոշ մարդիկ, գուցէ եւ ամբազչ Ճնդկահայութիւնը, կարող էին վիրաւորած զգալ իրենց ու քննամանալ հեղինակին: Ուստի եւ բնական է, որ վերջինս, հնարաւոր բռնը դժգոհութիւններն ու զայրայրը իրենից հեռացնելու եւ տարրեր հունով ուղղելու համար, բարւոք նկատէր մէկ անձանօք հասցէ՝ Մատաղ Բանաստեղծին հասցէն ցոյց տալ:

«Հասարակախօսութիւն»-ից մէկ փոքրիկ բաղւածք միայն բաւական է մեր սասածն ապացուցելու: «Որովհետեւ նոր մին անձանօք բանի հեղինակայ դառցել (Մատաղ Բանաստեղծը. Իր.) և խրարայ եկէ (իմացել է) որ իր ժամանակակիցցին կարելիայ խոժուվին (զայրանան), վասնորոյ ոչ անուննայ յիշէլ եւ ոչ տըպէլայ տվէլ»:

\*Դպիք բառը մենք վեցրել էինք միայն գիտմականի, զրագէտի մտքով: Սակայն «Շոնմարան» քերքից տեղեկանում ենք, որ Մարտիրոս Մկրտչեամբ եղել է նաև եկեղեցու դպիք, տիբացու:

Բայց շուսով մեր մատաղ թաճառ-  
տեղծը քողարկում է:

1821 թի վերջերին դպիր Մարտիրոսը  
խմբագրում եւ հրատարակում էր «Շտե-  
մարան» քերը, որի մասին քերես  
մէկ ուրիշ անգամ առիր ունենամք ըն-  
դարձակ խօսելու: Այսուեղ այսբանք մի-  
այն ասեմք, որ «Շտեմարան»-ի մէջ  
քառական ցուցմունքներ ենթ գտնում,  
որոնք վկայում են, թէ յիրավի, Դպիր  
Մարտ. Մկրտչեանը պիտի եղած լինի  
«Խորադիմայ»-ի իսկական Հեղինակը,  
նոյն ինքը Մատող Բանաստեղծը: Այդ  
ցուցմունքները կամ փաստերը երկու  
տեսակի են - առաջին՝ կողմանի վկա-  
յուրիններ, երկրորդ՝ ենթ իր իսկ դբ-  
այիր Մարտիրոսի խոսովանուրիններ  
կամ յայտարարուրիններ:

Նմոյշի համար թէ մէկից եւ թէ միւ-  
սից մէկ-մէկ օրինակ քերել աւելորդ  
չենք համարում:

Այսպէս քդրակից Մելիտոսը «Շտե-  
մարան»-ի խմբագրին ուղարձ իր նա-  
մակում գրում է. «Քոյ յօրինեալ «Խըս-  
րադիմայ Դժբաղուրեան Գիրքն, մա-  
նաւանդ Հայելին 1) ինձ միայնամայն  
այլ իմն մարդ փոխարկէց. նաև քանզ  
էտուր կարդալն եւ կարծումի ինձ պէս  
խելօֆ, հետեկած (խորամանկ) մարդ  
չկէր (չկար). բայց որ ժամ (յորժամ)  
էտ կարդացի, Մելիտոս դերասանիդ 2)  
վարքին մտադրութիւնն արարի. տեսի  
որ դրա մոտ պիտի նոր այրքեն կարդամ  
եւ քան սաւորեմ (սովորեմ), երեւ էր-  
պէս մարդ գտանվի...»

Ես հորագիտէց կարդացի նոր խաս-  
յացայ, որ աշխարխ դարտակ չի եւ  
յորժամ Հայելին կարդացի, պարզ խաս-  
յացայ աշխարհս ինչ խրաբայ: Ճշմա-  
րիտ բարեկամ շատ փոքր կգտանվի,

1) «Հայելին» «Խորադիմայ»-ին կցւած  
«Հասարակախօսուրեան» Բ. մասն է:

2) Մելիտոս - «Խորադիմայ»-ի գլխա-  
ւոր հերթակ:

սուտ բարեկամ շատ»: (Էջ 170, ընդ-  
գծումներն մերն են. իբ.).

Ընդգծած «Քոյ յօրինեալ» եւ «Խորա-  
դիմէդ» արտայայտուրիւնները, ինչպէս  
եւ քդրակցի դիմումը Դպիր Մարտիրո-  
սին, մտածել են տալիս, որ «Խորադիմայ  
Դժբաղուրեան»-ը յերավի Դպիր  
Մարտիրոս Մկրտչեանի հեղինակուրիւնն  
է, մասմանդ որ ենթ իր քերը ում է  
արձանագրում է այդ հանգամանքը: Հակառակ  
դէպքում՝ դպիրը կամ չէր տպագրի նման մէկ քդրակցուրիւնն  
եւ կամ գրնէ ծանօթուրեամբ կը հեր-  
ժէր:

Երկու տարի յետոյ՝ ինքը Դպիր Մար-  
տիրոսն էլ, իր իսկ քերանով յայտարա-  
րում է, որ այսո՛, «Խորադիմայ»ն ի՞ր  
ստեղծագործութիւնն է, ինքն է նրա Հե-  
ղինակը: Այժմ նա արդէն կարաղ էր  
այդ յայտարարութիւնն անել, որովհե-  
տեւ այլեւս ո՞չ համեստուրեան եւ ո՞չ  
էլ վախի տեղ էր մնում: Ամենն արդէն  
զիտէմ իրողութիւնը: Լաւագոյն դէպ-  
քում՝ հասարակաց կարծիքը նրան էր  
համարում «Խորադիմայ»-ի հեղինակը: Միւս կողմէց՝ գրածքը մեծ յաջողու-  
թիւն էր գտել եւ ուրեմն Դպիրը կա-  
րաղ էր պարձամեռվ յայտարարել, որ  
իրեն է պատկանում: Ապացոյց, որ կարն  
ժամանակի ընթացքում երեք անգամ  
խաղացում է Կալկարայում, հասար-  
կուրեան ամենաաչքի ընկնող դէմքերի  
մասմակցուրեամբ:

«Շտեմարան»-ի 1823 թ. Յունիարի  
վերջի համարաւմ (Էջ 1071) Դպիր Մար-  
տիրոսը դմում է ինեւեւալ ծանօթուրումը.  
«Տխուրամ ծանօթանէլն որ Խորադիմային  
երրորդ մասն եւ Խորադիմայ  
ստրջուրեանն տպած պատրաստ էր վա-  
սը բաժանման: ամիրաւ մկներն եւ նը-  
ռելշկանին (Յպումները) կորատէլ են ե-  
րեցի:

Երրորդ մասի կողմանէ ոչինչ փոյք-  
չումնեմ, քանզի այժմ յարկաւոր չի, ա-  
մենեցում խասկացը իմ գործի (ուզում

է ասել՝ «Խորադիմայ»-ի) արժանաւորութիւնն. նատագովուրեան կրկին յարկաւորութիւն չունիմ. բայց վասն խորադիմայի ստրզուրեան համար շատ ափսոսամ. ի՞նչ պիտի առել (անել), յուսովամ կրկին յօրինել եւ տպագրել ըստ պատեհուրեան եւ հանգամանաց ժամանակի, երէ ուէր կամեցի» (Ընդգծումներն մերն են. իք.).

Ի՞նչ ենք տեսնում այս պերճախօս փաստարդից - առաջին՝ այն, որ Դըպիր Մարտիրոս Մկրտչեանը իր խոկ քերանով վկայում է, թէ ինքն է «Խորադիմայ»-ի Հեղինակը, ինքն է յօրինել եւ իր իսկ գործն է նա:

Երկրորդ՝ որ նա յօրինած եւ տպագրած է եղել նաև «Խորադիմայ»-ի Գ. մասը - առաջինը՝ բուն գրւածքն է, երկրորդը՝ նրա «Ճասարակախօսուրիւնըն», կրկին բացատրելու, հասկացնելու համար իր գործի, այսինքն՝ «Խորադիմայ Դժբանուրեան»-ի «արժանաւորութիւնն»:

Երրորդ՝ որ նա յօրինած ու տպագրած - պատրաստած է եղել նաև մի երկրորդ քառուրգութիւն՝ «Խորադիմայ ստրզուրիւն» անունով: Դժբախտարար, պահեստում անիրաւ մկներն ու ցեցը մեր Դպրի այդ նոր հեղինակաւորիւնները կորատում, փշացնում են եւ նա բատիկած է լինում այրել իր տարիների աշխատուրեան արդինեք: «Խորադիմայ»-ի Գ. Մասի համար նա այնքան էլ չի ցառում, որովհետեւ նրա կարիքն այլեւս չկայ. ամենն արդէն գիտեն ու հասկացել են «Խորադիմայ Դժբանուրեան»-ի արժանաւորութիւնը: Շատ ցաւում է «Խորադիմայ ստրզուրեան»-ի համար, որպիսին նա նոր աշխատուրիւն էր եւ դեռ եւս հասարակուրեան սեփականուրիւն չդարձած: Սակայն, յոյս ունի կրկին յօրինել ու տպագրութեան յանձնել - երէ պայմանները ներքեն:

Այսպէս, ուրեմն, երէ մեր քերած վկայութիւնները տպացիօրէն հասկա-

նանք, այլեւս կասկած չի մնայ, որ «Խորադիմայ»-ի խոկական հեղինակը կամ մեզ ծանօթ Մատաղ Բանաստեղծը ինքը Դպիր Մարտիրոս Մկրտչեանն է, «Շտեմարան» քերքի խմբագիր-երատարակիչը եւ Օհանասփիւռեան ընկերութեան հիմնադիրներից ու ամենանուանդուն անդամներից մէկը:

Մեզ քւում է՝ խոկական սխալւած էլ չենք լինի, երէ Դպիր Մարտիրոսին ընդունենք որպէս խոկական հեղինակը մեզ զրադեցնող քատերգուրեան եւ նրան նոյնացնենք Մատաղ Բանաստեղծի հետ:

Բայց չմոռանանք փակագծերի մէջ խոկոյն նաև աւելացնել, որ վերոյիշեալ երկու փաստերը - քդրակից Մելիտոսի վկայութիւնը եւ իր՝ Դպրի յայտարարութիւնը - կարելի է քերեւս այլ կերպ էլ ըմբռնել: Այսինքն՝ որ «Խորադիմայ»-ի խոկական հեղինակը նիշու որ մեզ անձանօթ Մատաղ Բանաստեղծն է, եւ նա ու Դպիր Մարտիրոսը բոլորովին տարրեր անձնաւորութիւններ են: «Սակայն Դպիրը իրեն համարում է գրւածքի փաստական տէրը եւ նրա հեղինակը, որովհետեւ ինքը ահագին մասնակցութիւն է ունեցել նրա խմբագրութեան եւ հրատարակուրեան գործում:

Թերեւս նոյն հիմունիքներով էլ ժամանակի հասարակաց կարծիքն եւս նըրաքն է համարել այդ երկի հեղինակը, որի մէկ արձագանքն է քդրակից Մելիտոսի նամակը:

Հետագայում գուցէ նոր նիւթեր, նոր փաստարդեր էլ գտնելին, որոնք եւ նոր լոյս սփռեն այս մուր հարցի վրա: Սակայն այսօրւայ մեր ունեցած տեղեկութիւններվ պէտք է ընդունել, որ յիշաւի, «Խորադիմայ»-ի խոկական Հեղինակը Դպիր Մարտիրոս Մկրտչեանն է, որը ինչ-ինչ պատճառներով նպատակաշարմար է գտել իր անձը թագանել Մատաղ Բանաստեղծի անւան տակ:

Զուղա - Սպահան.

Յ. ԻՐԱՋԵԿ.